

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ

Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր
ՎՋՄԲ Վարկ 8957-AM

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ.
դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	8
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	9
ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ	10
Հատուկ հաշվի հաշվետվություն	11
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶԲ) 8957-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի (Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը, հատուկ հաշվի հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունները (ԾՄՀ), որոնք ներկայացվել են Համաշխարհային Բանկ՝ 2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար՝ 8957-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով, կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի (8957-AM վարկային համաձայնագիր) ֆինանսական վիճակի և 2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Համաշխարհային Բանկի ուղեցույցների և 8957-AM վարկային համաձայնագրերի համապատասխան հոդվածների:

Ի հավելումն, մեր կարծիքով, ներկայացված ԾՄՀ-ները, ինչպես նաև դրանց պատրաստման համար ներդրված ներքին վերահսկողությունը և ընթացակարգերը կարող են վստահելի հիմք հանդիսանալ 8957-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում համալրումների համար:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ից (Կազմակերպություն)՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների շեշտադրում

- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որը վերաբերում է հաշվապահական հաշվառման հիմունքներին: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են՝ օժանդակելու «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ղեկավարությանը՝ Համաշխարհային Բանկի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 3-ի վրա, որտեղ նշված է, որ Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2021թ. դեկտեմբերի 30-ը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գործող անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև 8957-AM վարկային համաձայնագրերի համապատասխան հոդվածների: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՆ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՆ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

30 հունիսի 2021թ.



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Եվրո

Note

2020թ.
դեկտեմբերի 31-ի
դրությամբ

Ակտիվներ

Ծրագրի կուտակային ծախսեր

1,026,735

Շինարարական աշխատանքների համար տրված կանխավճարներ

2,019,153

Մնացորդներ բանկերում

4

823,701

Ընդամենը ակտիվներ

3,869,589

Ֆոնդեր և պարտավորություններ

Համաշխարհային Բանկի ֆինանսավորում

6

3,296,147

Կառավարության համաֆինանսավորում

7

626,818

Փոխարժեքային տարբերություն

(220,773)

Կրեդիտորական պարտքեր

5

167,397

Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ

3,869,589

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 30-ին

Ստեփան Մաչյան

Գլխավոր տնօրեն

Մարինա Սաֆարյան

Ֆինանսական կառավարման և
հաշվապահական հաշվառման ղեկավար,
գլխավոր հաշվապահի
պարտականությունները կատարող



Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 18-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

Եվրո	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		Ծրագիր
	2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Ֆոնդերի աղբյուրներ							
Համաշխարհային բանկի ֆինանսավորում (տե՛ս ծանոթ. 6)	3,296,147	3,296,147					
Կառավարության համաֆինանսավորում (տե՛ս ծանոթ. 7)	626,818	626,818					
Ընդամենը	3,922,965	3,922,965					
Փոխարժեքային տարբերությունից վնաս	(220,773)	(220,773)					
Նվազեցնել. ֆինանսավորման օգտագործում							
Ապրանքներ, աշխատանքներ, դասընթացներ, գործառնական ծախսեր, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի համաձայն (տե՛ս ծանոթ. 8)	993,235	993,235	7,584,147	7,584,147	(6,590,912)*	(6,590,912)	16,716,500
Սկզբնավճար	33,500	33,500	33,500	33,500	-	-	33,500
Ընդամենը	1,026,735	1,026,735	7,617,647	7,617,647	(6,590,912)	(6,590,912)	16,750,000
Շրջանառու կապիտալի զուտ աճ (տե՛ս ծանոթ. 9)	2,675,457	2,675,457					

* Թերակատարման պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ Վարկային համաձայնագրի կնքման ամսաթիվը 2019թ. հոկտեմբեր ամսին է, սակայն համաձայնագիրը վերջնական վավերացվել է 2020թ. ապրիլ ամսին:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 18-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

Եվրո	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		Ծրագիր
	2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանա- կաշրջան	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանա- կաշրջան	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանա- կաշրջան	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում							
	977,110	977,110	7,601,522	7,601,522	(6,624,412)	(6,624,412)	15,066,500
Ճանապարհի բարելավման աշխատանքներ	800,704	800,704	5,455,152	5,455,152	(4,654,448)	(4,654,448)	11,750,000
Նախագծային ուսումնասիրություն և տեխնիկական հսկողություն	176,406	176,406	2,146,370	2,146,370	(1,969,964)	(1,969,964)	3,316,500
Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում							
	16,125	16,125	16,125	16,125	-	-	1,650,000
Աջակցություն Ծրագրի համակարգմանն ու իրականացմանը, ներառյալ աուդիտ	2,405	2,405	2,405	2,405	-	-	1,650,000
Տեխնիկական աջակցություն	13,720	13,720	13,720	13,720	-	-	-
Ընդամենը	993,235	993,235	7,617,647	7,617,647	(6,624,412)	(6,624,412)	16,716,500

Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ներառում 33,500 եվրո սկզբնավճարը:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 18-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԾԱՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8957-AM

Եվրո

	Category
Դիմումի համար	Ապրանքներ, աշխատանքներ, դատընթացներ, գործառնական ծախսեր, ոչ խորհրդարարական ծառայություններ, խորհրդարարների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի համաձայն
2-DA	928,050
3-DA	834,597
Ընդամենը	1,762,647

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 18-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Հանրապետության դեպարտամենտ» ՊԲԼԿ
Վեներական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր
ՎՋՄԲ՝ Լարկ 8957-AM

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

Հատուկ հաշվի հաշվետվություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8957-AM

Եվրո

Մնացորդը 2020թ. մայիսի 17-ի դրությամբ

Ավելացնել.

Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն

ժամանակաշրջանի ընթացքում վարկի համալրում

3,262,587

3,262,587

3,262,587

Նվազեցնել.

ժամանակաշրջանի ընթացքում հատուկ հաշվից

փոխհատուցում Համաշխարհային Բանկին

Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա
մնացորդը (1)

3,262,587

Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

808,930

Ավելացնել.

ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի
ծախսերի գումար

2,453,657

Ծառայության վճարներ (եթե առկա է)

2,453,657

2,453,657

Նվազեցնել.

Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են
հատուկ հաշվին)

Ընդամենը հաշվառված կանխավճար (2)

3,262,587

Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)

* Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը Համաշխարհային Բանկից ստացել է 3,262,647 եվրո վարկի համալրում, որից 60 եվրոն միջնորդ բանկի կողմից ծախսագրվել է որպես փոխանցման ծառայության վճար:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 18-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեություն

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ն (Կազմակերպություն) իրականացնում է Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիրը (Ծրագիր), որը ֆինանսավորվում է 2013թ. փետրվարի 11-ին կնքված թիվ 8229-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎՋԱԲ) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև:

2015թ. օգոստոսի 26-ին ուժի մեջ է մտել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎՋԱԲ) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված նոր Վարկային համաձայնագիրը («Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում») (Վարկ թիվ 8523-AM)՝ Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար տրամադրելով լրացուցիչ ֆինանսավորում:

2019թ. հոկտեմբերի 10-ին ուժի մեջ է մտել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎՋԱԲ) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված ևս մեկ Վարկային համաձայնագիրը (Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում) (Վարկ թիվ 8957-AM)՝ Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար տրամադրելով 13,400,000 եվրո լրացուցիչ ֆինանսավորում:

Ծրագրի նպատակն է ընտրված կենսական նշանակության ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և հզորացնել Կազմակերպության կարողությունը՝ կառավարելու համար կենսական նշանակության ճանապարհային ցանցը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

Մաս 1. Կենսական նշանակության ճանապարհների բարելավում

- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի մոտ 450 կմ երկարությամբ ընտրված ճանապարհների բարելավման աշխատանքների իրականացում:
- (ա) Պիլոտային սկզբունքով հիմնանորոգման և ընթացիկ պահպանման աշխատանքների իրականացում կենսական նշանակության ճանապարհային ցանցի՝ մոտ 23.4 կմ երկարությամբ ընտրված հատվածներում՝ հիմնանորոգման և պահպանման պայմանագրի պայմանների համաձայն և (բ) հիմնանորոգման և պահպանման երկու պայմանագրերի շրջանակներում մոտ 23 կմ երկարությամբ ընտրված կենսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում և ընթացիկ պահպանություն:
- Ծրագրի շրջանակում հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով մանրամասն նախագծային ուսումնասիրության, տեխնիկական հսկողության աշխատանքների և անկախ տեխնիկական աուդիտի իրականացում:
- Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ (ա) ճանապարհի՝ վտանգավորության բարձր աստիճան ունեցող հատվածների բարելավում, (բ) Ծրագրի շրջանակներում հիմնանորոգված բոլոր ճանապարհներին «Ապահով գյուղերի» իրականացման հետ կապված աշխատանքներ և (գ) ճանապարհային նշանների ձեռքբերում և տեղադրում:

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր
«ԵՄԲ» ՎՋԱԲ, 8057-AM

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի մասին

Մաս 2. Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում

- Ծրագրի իրականացման ու իրականացման նպատակով աջակցության տրամադրում ա) Ծրագրի կառավարման ու մոնիթորինգի համար պահանջվող գործառնական ծախսերի ֆինանսավորման միջոցով, ինչպես նաև բ) Ծրագրի ֆինանսական աուդիտի իրականացման միջոցով:
- Հանապարհային ակտիվների կառավարման համակարգի տեղեկատվական բազայի ձեռքբերում, այդ թվում՝ տեղադրում և ՀԱՏՏ-ի անձնակազմի՝ նշված տեղեկատվական բազայի օգտագործման իմաստով վերապատրաստում, բ) ճանապարհային պայմանների և երթևեկության ուսումնասիրման նպատակով ճանապարհների հետազոտման սարքավորումների ձեռքբերում, գ) ճանապարհային լաբորատորիայի սարքավորումների ձեռքբերում՝ Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների որակը ստուգելու համար, և դ) կենսական նշանակության ճանապարհային ցանցի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում՝ ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի համար:
- Հանապարհային երթևեկության անվտանգության ծրագրի իրականացում, ի թիվս այլ հարցերի ա) ճանապարհների վտանգավոր հատվածների բարելավման աշխատանքների համար մանրամասն նախագծերի մշակում, բ) ՀԱՏՏ-ի և Հանապարհային ոստիկանության անձնակազմի համար ճանապարհային երթևեկության անվտանգության կառավարման թեմաների վերաբերյալ տեխնիկական աջակցության տրամադրում և վերապատրաստման ծրագրեր, գ) ճանապարհային անվտանգության կրթական ծրագրեր «Ապահով գյուղերի» դպրոցներում, դ) կենսական նշանակության ճանապարհային ցանցի հետ կապված ճանապարհային երթևեկության անվտանգության քարոզարշավների իրականացում, ե) ճանապարհային երթևեկության անվտանգության գործողությունների ծրագրի մշակում, զ) Ծրագրի Մաս 2 (գ) (և) կետի ներքո մշակված գործողությունների ծրագրի ընտրված միջոցառումների իրականացում և է) ավտոլթարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և կառավարման համակարգի մշակում և ներդնում և ՀԱՏՏ-ի, Հանապարհային ոստիկանության անձնակազմի և ըստ անհրաժեշտության այլ շահառուների համար վերապատրաստման ծրագրի տրամադրում:
- Տեխնիկական աջակցության տրամադրում, ի թիվս այլ հարցերի՝ ա) կատարողականի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ ճանապարհների հիմնանորոգման ու պահպանության համար տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրության իրականացման, այդ թվում՝ առնվազն մեկ ճանապարհային հատվածի նախանշման հարցում, բ) Ծրագրի հետ կապված սոցիալական մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև ճանապարհային ոլորտի ֆինանսական կայունության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման հարցում, գ) ՀԱՏՏ-ի անձնակազմի և տեղական կապալառուների վերապատրաստման հարցում՝ Ծրագրի նոր գաղափարների, այդ թվում՝ կատարողականի վրա հիմնված բազմամյա պայմանագրերի նախագծման ու իրականացման, արդյունավետ նախագծային ստանդարտների և ՀԱՏՏ-ի անձնակազմի համար պլանավորման ու պայմանագրերի մոնիթորինգի վերաբերյալ, դ) ճանապարհային ոլորտում ապագա հնարավոր ներդրումների նախապատրաստման համար պահանջվող տեխնիկական ուսումնասիրությունների իրականացման և մանրամասն նախագծերի իրականացման մշակման հարցում, ե) կենսական նշանակության ճանապարհային ցանցի համար ռազմավարական զարգացման պլանի մշակում և զ) ճանապարհային ոլորտի համար աղետների ռիսկի իմաստով պատրաստվածության խթանում՝ ներառյալ ճանապարհային ինֆրաստրուկտուրայի վրա բնական աղետների ազդեցության ռիսկի գնահատում:

Մաս 3. Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքման բաղադրիչ

Թույլատրելի արտակարգ իրավիճակի պարագայում աջակցության տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

Համաձայն 2019թ. հոկտեմբերի 10-ին կնքված 8957-AM վարկային համաձայնագրի՝ Ծրագիրն իրականացվում է հետևյալ հոդվածներով.

Հոդված	Ծախսերի ֆինանսավորում տոկոսով (ներառյալ հարկերը)	Հատկացված վարկային միջոցներ (Եվրո)
Ապրանքներ, աշխատանքներ, դասընթացներ, գործառնական ծախսեր, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի համաձայն	80%	13,366,500
Արտակարգ իրավիճակների հետ կապված ծախսեր՝ Ծրագրի Մաս 3-ի համաձայն	100%	-
Սկզբնավճար		33,500
Ընդամենը		13,400,000

Հայաստանի Հանրապետության կողմից վճարվելիք սկզբնավճարը կազմում է վարկային գումարի 0.25%-ը:

Ծրագրի գումարները բաշխված են հետևյալ բաղադրիչների միջև.

Բաղադրիչներ	Բանկի ֆինանսավորում (Եվրո) (ներառյալ հարկերը)	Կառավարության ֆինանսավորում (Եվրո)	Ընդհանուր արժեք (Եվրո)
Կենսական նշանակության ճանապարհների բարելավում	12,046,500	3,020,000	15,066,500
Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում	1,320,000	330,000	1,650,000
Ընդամենը Ծրագրի ծախսեր	13,366,500	3,350,000	16,716,500
Սկզբնավճար	33,500	-	33,500
Ընդամենը	13,400,000	3,350,000	16,750,000

Կազմակերպության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3:

Ծրագրի շրջանակներում ընդգրկված աշխատակիցների միջին քանակը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կազմել է 14 մարդ:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, Համաշխարհային Բանկի ուղեցույցի, ինչպես նաև 8957-AM վարկային համաձայնագրերի համապատասխան պահանջների համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ): Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են եվրոյով (ներկայացման արժույթ):

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս եվրոյից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով: Համաշխարհային բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված եվրոյից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (<https://clientconnection.worldbank.org>) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցները, կանխավճարները և կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 եվրոն կազմում է 641Ձ11 ՀՀ դրամ: Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

2.3 Ծրագրի ֆինանսավորում

8957-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը գրանցվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն, ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում:

Համաշխարհային Բանկի ֆինանսավորում

8957-AM վարկային համաձայնագրերի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Համաշխարհային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձին՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

Կառավարության համաֆինանսավորում

Կառավարության համաֆինանսավորման գումարները ճանաչվում են որպես ֆինանսավորում և ներառվում են Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ դրանք փոխանցվել են Ծրագրի ընթացիկ հաշվին («Կառավարության համաֆինանսավորման հաշիվ»), որը նույնպես բացվել է Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարանում:

2.4 Ծրագրի ծախսեր

Ծրագրի ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ի հավելումն՝ ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում: Ի լրումն, ծանոթագրություն 8-ում ներկայացված է ծախսերի բաշխումն ըստ հոդվածների:

2.5 Կանխավճարներ

Կանխավճարները, որոնք ներառում են դեռևս չստացված ծառայությունների և ապրանքների համար վճարված գումարները, չափվում են անվանական արժեքով:

2.6 Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ներառում են վճարվելիք գումարները, որոնք չափվում են անվանական արժեքով:

3 Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն թիվ 8957-AM վարկային համաձայնագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. դեկտեմբերի 30-ը:

4 Մնացորդներ բանկերում

Եվրո

Հատուկ հաշիվ

Տեղական հաշիվ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
808,930
14,771
<u>823,701</u>

5 Կրեդիտորական պարտքեր

Եվրո

Հետերաշխիքային կրեդիտորական պարտքեր կապալառուներին

Կրեդիտորական պարտքեր կապալառուներին

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
78,183
89,214
<u>167,397</u>

6 Համաշխարհային Բանկի ֆինանսավորում

Եվրո	2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակա- շրջան	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԾԱՀ ընթացակարգեր	1,762,647	1,762,647
Հատուկ հաշվի կանխավճար	1,500,000	1,500,000
Սկզբնավճար	33,500	33,500
	<u>3,296,147</u>	<u>3,296,147</u>

7 Կառավարության համաֆինանսավորում

ՎՀՄԲ թիվ 8957-AM վարկային համաձայնագրով նախատեսված բոլոր ծախսերի համար գործում է 20% կառավարության համաֆինանսավորում: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կառավարության համաֆինանսավորումը կազմել է 626,818 եվրո (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 626,818 եվրո):

8 Ֆոնդերի օգտագործում ըստ հոդվածների

Ինչպես նկարագրված է 8957-AM վարկային համաձայնագրերում, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում ծախսերը ներկայացված են երկու հոդվածով, որից մեկը միավորում է որոշ ենթահոդվածներ: Օգտագործողների հարմարության համար ֆոնդերի օգտագործման բացվածքը ներկայացված է ստորև.

Եվրո	2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակա- շրջան	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատանքներ	800,704	800,704
Խորհրդատվական ծառայություններ	190,126	190,126
Գործառնական ծախսեր և վերապատրաստում	2,405	2,405
Սկզբնավճար	33,500	33,500
	<u>1,026,735</u>	<u>1,026,735</u>

9 Շրջանառու կապիտալի գուտ աճ

Եվրո	2020թ. մայիսի 17-ից 2020թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակա- շրջան	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներում աճ	823,701	823,701
Կանխավճարների աճ	2,019,153	2,019,153
Կրեդիտորական պարտքերի աճ	(167,397)	(167,397)
	<u>2,675,457</u>	<u>2,675,457</u>

10 Կազմակերպության կողմից ստացված գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

2020թ. մայիսի 17-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան
Եվրո

Հոդված	Դիմում	Կազմակեր- պություն	ՀՔ	Տարբե- րություն
Ապրանքներ, աշխատանքներ, դասընթացներ, գործառնական ծախսեր, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի համաձայն	2-DA	928,050	928,050	-
	3-DA	834,597	834,597	-
		<u>1,762,647</u>	<u>1,762,647</u>	-
Հատուկ հաշվի կանխավճար	1-DA	1,500,000	1,500,000	-
		<u>1,500,000</u>	<u>1,500,000</u>	-
Ընդամենը		<u>3,296,147</u>	<u>3,296,147</u>	-